ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

N 10/3331-12
04.06.2012թ.

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ՝ press@moj.am

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի իրավաբան

պարոն Գևորգ Հայրապետյանին

**Ի պատասխան Ձեր 2012 թվականի մայիսի 25-ի
170-ի 7 թվակիր նամակի**

Հարգելի պարոն Հայրապետյան

Նկատի ունենալով «Քաղաքացիական ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջները՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության աշխատակիցները 2011 թվականի ընթացքում արժանացել են խրախուսանքների միանվագ դրամական պարգևատրումների տեսքով:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության աշխատակիցների դրամական պարգևատրումների չափի մասին տեղեկատվությանը, հայտնում ենք, որ նման տեղեկատվություն իրավասու չենք տրամադրել՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի

փորձաքննության գործակալության աշխատակիցները, բացի դրամական պարգևատրումներից որևէ այլ պարգևատրում (նվեր) չեն ստացել:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ